

խարհի չորս կողմը տարածուած բոլոր մի-
սիոնաբուծիւնները: Անիկա կը դրկէր ա-
ռաքելական յաջորդներ «հերետիկոս» եւ
«հերձուածող» երկիրներ՝ քրիստոնեաները
դաւանափոխ ընելու համար:

Հոռմի այս նոր կազմակերպութեան
Հայոց վրայ ուշադրութիւն դարձնելուն
պատճառ եղաւ Պօղոս Ե. պփային կողմէ
Պարսից Շահ Աբաս թագաւորին զրկուած
դեսպանը՝ Պօղոս Զրտտաղինի բոլոնիացի,
որ իր դեսպանութեան միջոցին (1615) այ-
ցելից Նախիջևանի Ունիթոններու անշը-
քացած միաբանութեան և Մատթէոս Ե-
րազմոս եպիսկոպոսին մահէն յետոյ նոյն
գաւառին եպիսկոպոսութիւնը ստանձնեց
1621ին (տե՛ս, Բանաւէր 1899, էջ 219): Իր
պաշտօնավարութեան շրջանին (1621-27)
ոչ միայն գրական աշխատութիւններ ու-
նեցաւ, այլ նաև կրթական գործունէու-
թիւն: Խնդրեց Գրիգոր ԺԵ. Պապէն որ
Հայ տղոց կրթութեամբ համար դպրոց մը
հաստատէ (1622) (տե՛ս, Պատմութիւն հայերէն
դպրոցեան, 1905 Վենետիկ, էջ 101):

Գրիգոր ԺԵ. այս առաջարկը ընդու-
նելով Մինուերայի վանքէն գիտնական
Գրիգոր Ուրսինոս անուն անձի մը յանձ-
նեց այդ վարժարանին հիմնարկութիւնը և
տեսչութիւնը, բայց ասիկա երբ դէպի Հա-